# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*20 սեպտեմբերի 2023թվականի N 1077*

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208-Ն որոշման հավելվածը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 5 /հինգ/ հատ,
2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 3 /երեք/ հատ,
3)հանրային սննդի կազմակերպում՝ 3 /երեք/ հատ,
4)գովազդի տեղադրում՝ 1 /մեկ/ հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

20 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թ. սեպտեմբեր 20-ի
N 1077 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանակն անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | «Միքս սուպերմարկետ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Սպանդարյան փողոց 9 | Ք. Հրազդան, Սպանդարյան փողոց 9 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երրորդ եռամսյակի համար |
| 2. | «Միքս սուպերմարկետ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Սպանդարյան փողոց 9 | Ք. Հրազդան, Սպանդարյան փողոց 9 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երրորդ եռամսյակի համար |
| 3. | Ա/Ձ «Արթուրիկ Սիմոնյան» | Սոլակ 6-րդ թ-ս տուն 22 | Սոլակ 6-րդ թ-ս տուն 22 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երրորդ եռամսյակի համար |
| 4. | Ա/Ձ «Արթուրիկ Սիմոնյան» | Սոլակ 6-րդ թ-ս տուն 22 | Սոլակ 6-րդ թ-ս տուն 22 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երրորդ եռամսյակի համար |
| 5. | Ա/Ձ «Անգին Բաբաջանյան» | Ք. Հրազդան,Միկրոշրջան թ-ս, 49/9 | Ք. Հրազդան,Միկրոշրջան թ-ս, շենք 44, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երկրորդ կիսամյակի համար |
| 6. | Ա/Ձ «Անգին Բաբաջանյան» | Ք. Հրազդան,Միկրոշրջան թ-ս, 49/9 | Ք. Հրազդան,Միկրոշրջան թ-ս, շենք 44, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երկրորդ կիսամյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7. | Ա/Ձ «Լիլիթ Հովհաննիսյան» | Քաղսի 8-րդ փողոց, տուն 2 | Ք. Հրազդան, Ձ. Ան[illegible]նիկի 57 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երրորդ եռամսյակի համար |
| 8. | Ա/Ձ «Լիլիթ Հովհաննիսյան» | Քաղսի 8-րդ փողոց, տուն 2 | Ք. Հրազդան, Ձ. Անդրանիկի 57 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երրորդ եռամսյակի համար |
| 9. | Ա/Ձ «Հայկ Պետրոսյան» | Ք. Հրազդան,Երևանյան խճ. Տուն 25Բ | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 34/1 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երրորդ եռամսյակի համար |
| 10. | Ա/Ձ «Հայկ Պետրոսյան» | Ք. Հրազդան,Երևանյան խճ. Տուն 25Բ | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 34/1 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երրորդ եռամսյակի համար |
| 11. | Ա/Ձ «Հայկ Պետրոսյան» | Ք. Հրազդան,Երևանյան խճ. Տուն 25Բ | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս խաչմերուկին հարող տարածք | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երրորդ եռամսյակի համար |
| 12. | «Դավս Գրուպ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Ձ. Անդրանիկի 8 | Ք. Հրազդան, Ձ. Անդրանիկի 8, թիվ 12 | գովազդի տեղադրում | 5 քառ/մ | 2023 թվականի սեպտեմբեր ամսվա համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*20 սեպտեմբերի 2023թվականի N 1078*

### ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ, 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Արմինե Ասատրյանի 2023 թվականի սեպտեմբերի 4-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Ջրառատ գյուղի 6-րդ փողոցի 15-րդ շենքի թիվ 1 բնակարանի բնակիչ Արմինե Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25052023-07-0198, գաղտնաբառ՝ 8JGND1HAV6PU/ Հրազդան համայնքի Ջրառատ գյուղի 6-րդ փողոց թիվ 15 հասցեում գտնվող գույքի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Ջրառատ, 6-րդ փողոց 15/1 հասցեով:

2. Կոտայքի մարզի Ջրառատ գյուղի 6-րդ փողոցի 15-րդ շենքի թիվ 1 բնակարանի բնակիչ Արմինե Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 25052023-07-0198, գաղտնաբառ՝ 8JGND1HAV6PU և N 18122020-07-0041, գաղտնաբառ՝ BVD3CVQKG3S7/ Հրազդան համայնքի Ջրառատ գյուղի 6-րդ փողոց թիվ 15/1 և 15 հասցեներում գտնվող միավորված գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Ջրառատ, 6-րդ փողոց 15:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

20 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## ՈՐՈՇՈՒՄ

*20 սեպտեմբերի 2023թվականի N 1079*

### ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Գագիկ Ղազարյանի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի դիմումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 110 շենքի թիվ 40 բնակարանի բնակիչ Գագիկ Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 25072023-07-0005, գաղտնաբառ՝ UH9VMUPCLNYQ, N 25072023-07-0042, գաղտնաբառ՝ 6XSZIJLGWBX6, N 25072023-07-0200, գաղտնաբառ՝ ZZEZ7HWBTVLE/ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Օգոստոսի 23-ի փողոց 42/5, 42/2 և 42/2 հասցեներում գտնվող միավորված հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամասի Օգոստոսի 23-ի փողոց 42/2:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

20 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱUՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*20 սեպտեմբերի 2023թվականի N 1080*

ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Ռուբեն Բարեղամյանի 2023 թվականի սեպտեմբերի 15-ի դիմումը.

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝</u>*

1.Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղի 11-րդ փողոցի թիվ 16 տան բնակիչ Ռուբեն Բարեղամյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 0161116, տրված՝ 2003 թվականի հունիսի 16-ին) Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղում գտնվող կիսակառույց բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Լեռնանիստ, 13-րդ փողոց 4:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

20 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*22 սեպտեմբերի 2023թվականի N 1081*

## ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով, հիմք ընդունելով Ավագ Մանուկյանի 2023 թվականի սեպտեմբերի 18-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Երևանյան փողոցի 2-րդ շենքի թիվ 35 բնակարանի բնակիչ Ավագ Մանուկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2644689, տրված՝ 2009 թվականի նոյեմբերի 27-ին) քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Նար-Դոս փողոց, 1-ին նրբանցք 8 հասցեում գտնվող հողամասի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս 282/5 հասցեով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

22 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

*22 սեպտեմբերի 2023թվականի N 1082*

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208-Ն որոշման հավելվածը.

*Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 2 /երկու/ հատ,
2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 2 /երկու/ հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

22 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թ. սեպտեմբեր 22-ի
N 1082 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ա/Ձ «Մարգարիտ Խաչատրյան» | Ք. Հրազդան,Միկրոշրջան թ-ս, 311/11 | Ք. Հրազդան,Միկրոշրջան թ-ս, 311 շենք, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երկրորդ կիսամյակի համար |
| 2. | Ա/Ձ «Մարգարիտ Խաչատրյան» | Ք. Հրազդան,Միկրոշրջան թ-ս, 311/11 | Ք. Հրազդան,Միկրոշրջան թ-ս, 311 շենք, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երկրորդ կիսամյակի համար |
| 3. | Ա/Ձ «Դավիթ Միերյան» | Ք. Հրազդան, Հացագործների նրբ., տուն 12 | Ք. Հրազդան,Միկրոշրջան թ-ս, 26 շենք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երրորդ եռամսյակի համար |
| 4. | Ա/Ձ «Դավիթ Միերյան» | Ք. Հրազդան, Հացագործների նրբ., տուն 12 | Ք. Հրազդան,Միկրոշրջան թ-ս, 26 շենք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի երրորդ եռամսյակի համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 սեպտեմբերի 2023թվականի N 1083*

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի
N 995 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 25-ի «Հրազդան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» N 995 որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

25 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*25 սեպտեմբերի 2023թվականի N 1084*

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 532 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

*Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝*

1. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 16-ի «Հրազդան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» N 532 որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

25 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 սեպտեմբերի 2023թվականի N 1085*

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 13-ի № 56 որոշումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1. Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 73 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ № 13102022-07-0084, տրված՝ 29 հունիսի 2006 թվականին) 1933 քառակուսի մետր մակերեսով նախադպրոցական ուսումնական հաստատության շենքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հրազդանի թիվ 16 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 25 (քսանհինգ) տարի ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

25 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 սեպտեմբերի 2023թվականի N 1086*

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի № 241 որոշումը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հրազդան համայնքի Քաղսի բնակավայրի 1-ին փ./Շ/45 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ № 15082023-07-0139, տրված՝ 15 օգոստոսի 2023 թվականին) 588 քառակուսի մետր մակերեսով նախադպրոցական ուսումնական հաստատության շենքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հրազդան համայնքի Քաղսիի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 25 (քսանհինգ) տարի ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

25 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*25 սեպտեմբերի 2023թվականի N 1087*

### ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Սոֆիա Մանասյանի 2023 թվականի սեպտեմբերի 15-ի դիմումը.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի 89Ա տան բնակիչ Սոֆիա Մանասյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2023 թվականի հունիսի 8-ին, տրված՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ գրանցված գրանցամատյանում՝ N 2201-ով, ժառանգական գործ N 194/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան Գ-3 հասցեում գտնվող գույքին (ծածկագիր՝ 07-001-0523-0009) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 319:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

25 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 սեպտեմբերի 2023թվականի N 1088*

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Էլինար Պետրոսյանի 2023 թվականի սեպտեմբերի 18-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Սպանդարյան փողոցի 16-րդ շենքի թիվ 11 բնակարանի բնակիչ Էլինար Պետրոսյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 26-ին, տրված՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ գրանցված գրանցամատյանում՝ N 3055-ով, ժառանգական գործ N 101/ Հրազդան համայնքի Քաղսի գյուղում գտնվող հողամասին (ծածկագիր՝ 07-063-0071-0022) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 2-րդ փողոց 10/1:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

25 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*26 սեպտեմբերի 2023թվականի N 1089*

ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով««Տեղական տուրքերի և վճարների մասին»» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 17-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմեն Սարգսյանի 2023 թվականի սեպտեմբերի 26-ի դիմումը.

*<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝</u>*

1.Հրազդանի համայնքապետարանի 900125001140 հաշվեհամարին, որպես աճուրդի նախավճար վճարված 650 000 (վեց հարյուր հիսուն հազար) դրամ գումարը հետ վերադարձնել Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի 3-րդ փողոց թիվ 44 տան բնակիչ Արմեն Սևակի Սարգսյանին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

26 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 սեպտեմբերի 2023թվականի N 1090*

ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Արտյոմ Հովհաննիսյանի 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 8 տան բնակիչ Արտյոմ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 19092023-07-0086, գաղտնաբառ՝ I4UWEDSBMHBZ) Հրազդան քաղաքի Կոճոռ թաղամաս Կալեր տարածքում գտնվող գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս 282/6:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

26 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## ***Ո Ր Ո Շ Ու Մ***

*26 սեպտեմբերի 2023թվականի N 1091*

### ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով, հիմք ընդունելով Ռուբեն Մուրադյանի 2023 թվականի օգոստոսի 15-ի դիմումը.

## Ո Ր Ո Շ Ու Մ   Ե Մ՝

1.Երևան քաղաքի Դավթաշեն, 4-րդ փողոց թիվ 6 տան բնակիչ Ռուբեն Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1166272, տրված՝ 2004 թվականի հունիսի 11-ին) քաղաք Հրազդան, Պիոներների փողոց, 12 շենք 14 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Պ. Դուրյան փողոց, 12 շենք 14 հասցեով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

26 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*26 սեպտեմբերի 2023թվականի N 1092*

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Գոհար Ամիրբեկյանի 2023 թվականի սեպտեմբերի 20-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 45 շենքի թիվ 42 բնակարանի բնակիչ Գոհար Ամիրբեկյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 17-ին, տրված՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ գրանցված գրանցամատյանում՝ թիվ 4934-ով, ժառանգական գործ 218/ Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղում գտնվող բնակելի տանը (ծածկագիր՝ 07-033-0013-0015) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Լեռնանիստ, 3-րդ թաղամաս 13:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

26 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*27 սեպտեմբերի 2023թվականի N 1093*

### ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208-Ն որոշման հավելվածը.

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝</u>*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)գովազդի տեղադրում՝ 6 /վեց/ հատ,
2)հեղուկ վառելիքի վաճառք՝ 1 /մեկ/ հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թ. սեպտեմբեր 27-ի
N 1093 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | «Իմիջ Մ.Գ.» ՍՊԸ | Ք. Գյումրի, Սունդուկյան 149 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս | գովազդի տեղադրում | 18 քառ/մ, Էկոսենս | 2023 թվականի սեպտեմբեր ամսվա համար |
| 2. | «Իմիջ Մ.Գ.» ՍՊԸ | Ք. Գյումրի, Սունդուկյան 149 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս | գովազդի տեղադրում | 18 քառ/մ, Բելովո | 2023 թվականի սեպտեմբեր ամսվա համար |
| 3. | «Իմիջ Մ.Գ.» ՍՊԸ | Ք. Գյումրի, Սունդուկյան 149 | Ք. Հրազդան, Սպանդարյան փողոց | գովազդի տեղադրում | 36 քառ/մ, Հրազդան պարկ | 2023 թվականի սեպտեմբեր ամսվա համար |
| 4. | «Իմիջ Մ.Գ.» ՍՊԸ | Ք. Գյումրի, Սունդուկյան 149 | Ք. Հրազդան, Հայ Ֆիդայիների փողոց, Հ-28 | գովազդի տեղադրում | 18 քառ/մ, Առգե | 2023 թվականի սեպտեմբեր ամսվա համար |
| 5. | «Բիթիէլ սերվիս» ՍՊԸ | Ք. Երևան, Լենինգրադյան փողոց | Ք. Հրազդան, Ջրառատ խաչմերուկ,օղակաձև ծաղկանոց | գովազդի տեղադրում | 36 քառ/մ, Ռեդ ինվեստ, Կեչառիս | 2023 թվականի սեպտեմբեր ամսվա համար |
| 6. | «Իմիջ Մ.Գ.» ՍՊԸ | Ք. Գյումրի, Սունդուկյան 149 | Ք. Հրազդան, Կենտրոնական զբոսայգի, հարկ | գովազդի տեղադրում | 2.88 քառ/մ, ինքնագովազդ | 2023 թվականի սեպտեմբեր ամսվա համար |
| 7. | «Արամն Անի» ՍՊԸ | Ք. Հրազդան, Շահումյան 42 | Ք. Հրազդան, ք. Հրազդան, Րաֆֆու և Շահումյան փողոցների խաչմերուկ | հեղուկ վառելիքի վաճառք | լցակայան հիմնական շինություն | 2023 թվականի տարվա համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*27 սեպտեմբերի 2023թվականի N 1094*

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 107 շենքի 24 բնակարանի բնակիչներ՝ Էլմիրա Մկրտիչյանի, Յուրի Մկրտչյանի և Աշոտ Մկրտչյանի դիմումի հիման վրա: Դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2003 թվականի հունիսի 23-ին ՀՀ կադաստրի Հրազդանի տարածքային ստորաբաժանումում կատարվել է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 107 շենքի 24 բնակարանի սեփականության իրավունքի պետական գրանցում: Սեփականության գրանցման համար հիմք են հանդիսացել 1994 թվականի հոկտեմբերի 27-ի Հրազդանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի թիվ 10 նիստի արձանագրության քաղվածքը և Հրազդանի համայնքապետ Ա. Դանիելյանի կողմից Էլմիրա Մնացականի Մկրտիչյանին տրված տեղեկանքը: Ըստ վերը նշված տեղեկանքի՝ Էլմիրա Մկրտիչյանի հետ միասին բնակարանի համասեփականատեր են համարվում նաև ամուսին՝ Յուրի Մկրտչյանը, որդին՝ Աշոտ Մկրտչյանը և երկու անհայտ անձինք՝ Մարգարիտա և Եվգենյա անուններով և տեղեկանքում նշված է, որ վերջիններս հանդիսանում են Էլմիրա Մկրտիչյանի դուստրերը: Մինչդեռ Էլմիրա Մկրտիչյանը և Յուրի Մկրտչյանը իրենց համատեղ ամուսնության կյանքում ունեցել են երկու որդի և երբևէ նման անունով անձանց չեն ճանաչել կամ հանդիպել: Ելնելով վերոգրյալից դիմումատուները խնդրել են տրամադրել ճշգրտված տեղեկանք՝ ՀՀ կադաստրի կոմիտե ներկայացնելու համար նոր սեփականության իրավունքի վկայական ստանալու նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի ընթացքում լսմանը մասնակցելու համար դիմումատուները ծանուցվել են, ապահովվել է վերջիններիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը: Վարչական վարույթի ընթացքում դիմումատուները պնդել են իրենց դիմումում ներկայացված փաստերը և խնդրել տրամադրել նոր տեղեկանք ՀՀ կադաստրի կոմիտե ներկայացնելու համար: Վերջիններս հայտնել են, որ ներկայումս

ՀՀ վարչական դատարանում առկա է քննվող վարչական գործ /ՎԴ2/0109/05/23/ ըստ հայցի՝ Էլմիրա Մնացականի Մկրտիչյանի, Յուրի Վարշամի Մկրտչյանի և Աշոտ Յուրիի Մկրտչյանի ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի և Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-19 մատյանի 098 համարի տակ 2003 թվականի հունիսի 23-ին կատարված համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցման մեջ Մարգարիտա և Եվգենյա Մկրտչյանների մասով ուղղում կատարելուն և նրանց համատեղ սեփականատերերի կազմից հանելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Ներկայումս վարչական գործը ՀՀ վարչական դատարանում քննվում է և Դատարանի կողմից 2023 թվականի նոյեմբերի 23-ին նշանակվել է դատաքննության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետի համաձայն՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝ ... դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ:

Վարչական մարմինը փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում գտնում է, որ վարչական վարույթը ենթակա է կարճման, քանի որ ՀՀ վարչական դատարանում առկա է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով քննվող վարչական գործ /ՎԴ2/0109/05/23/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1. Էլմիրա Մկրտիչյանի, Յուրի Մկրտչյանի և Աշոտ Մկրտչյանի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ որոշման վերաբերյալ իրազեկվելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էլմիրա Մկրտիչյանին, Յուրի Մկրտչյանին և Աշոտ Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

### *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*27 սեպտեմբերի 2023թվականի N 1095*

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 3.0քմ մակերեսով 07-001-0110-0190 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Զորավար Անդրանիկի փողոցա 161/3:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 սեպտեմբերի 2023թվականի N 1096*

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N 311 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումով, հիմք ընդունելով «ԽՈՅԱՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից փոփոխված աշխատանքային նախագիծը և «ԼԱՐԳՈ-ՎԻՆՉ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Վահագն Աստրյանի 2023 թվականի սեպտեմբերի 27-ի դիմումը.

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

1.Հրազդան համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 29-ի «Նախագծային փաստաթղթերը համաձայնեցնելու և շինարարության թույլտվություն տալու մասին» N 311 որոշմամբ տրված N 10 շինարարության թույլտվության մեջ կառուցապատող «Դավիթ Աբրահամյան, Կոտայքի մարզ, գ.Ֆանտան, 3-րդ փողոց տուն 10» բառերը փոխարինել կառուցապատող ««ԼԱՐԳՈ-ՎԻՆՉ» ՍՊԸ» բառերով, 4-րդ կետում «(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)» տողում լրացնել «ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ» բառերը, իսկ «(նշել իրավասու մարմնի անվանումը)» տողում՝ «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ» բառերը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

28 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան